Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2006թ. նոյեմբերի 4-ի թիվ 2 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան
«04» նոյեմբեր 2006թ.

Կ Ա Ր Գ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Սույն Կարգը սահմանում է Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու ընդհանուր պայմանները:
2. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը կազմակերպվում է՝ հաշվի առնելով հավակնորդների կուտակած կրեդիտները: Առաջին և ավարտական կուրսերում երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն չի կազմակերպվում: Հավակնորդների դիմումները քննարկվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երկու շաբաթների ընթացքում:
3. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթությունը իրականացվում է միայն վճարովի սկզբունքով:
4. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալ թույլատրվում է, եթե առարկաների ժամաքանակների 25%-ից ավելի տարբերությամբ պայմանավորված ստուգարքների և քննությունների թիվը, հաշվի առնելով բուհերի և մասնագիտությունների առանձնահատկությունները, ըստ տվյալ կիսամյակի չի գերազանցում 8-ը:
5. Դիմումները քննարկելու նպատակով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով: Համալսարանի ռեկտորը, ատեստավորման հանձնաժողովում հարցը քննարկելուց հետո, որոշում է ուսանողի ընդունման ժամկետը, կուրսը և մյուս պայմանները, կամ պատճառաբանված հիմնավորում է մերժելու մասին իր որոշումը: Դիմումները քննարկվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երկու շաբաթների ընթացքում:

6. Ատեստավորման հանձնաժողովը մրցութային հավասար պայմանների դեպքում ըստ հերթականության առավելություն է տալիս՝

ա) տվյալ մասնագիտությամբ աշխատող դիմորդներին,

բ) առավելագույն մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող դիմորդներին,

գ) դիպլոմի ներդիրում նշված առարկաների քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին:

7. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող՝ տվյալ կիսամյակում ըստ մասնագիտության ուսանողների թիվը չպետք է գերազանցի տվյալ մասնագիտության համար ՀՀ կրթության կառավարման պետական լիազոր մարմնի (այսուհետ՝ Նախարարություն) լիցենզիայով սահմանված տեղերի քանակը:

8. Տարբեր պատճառներով գոյացած առարկայական տարբերությունները և առարկաների առանձին բաժինները (ուսումնական պլանների տարբերություններ, չհանձնած քննություններ և ստուգարքներ) համարվում են ակադեմիական պարտքեր: Դրանց ցանկը և ծավալները որոշում է Համալսարանը: Ուսանողը պետք է ուսումնառի և հանձնի գոյացած տարբերությունները՝ Համալսարանի կողմից սահմանած անհատական ժամանակացույցով:

9. Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում Համալսարանը Նախարարություն է ներկայացնում հաշվետվություն երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների շարժի վերաբերյալ:

10. Ոչ պետական չհավատարմագրված բուհերի շրջանավարտներին չի թույլատրվում Համալսարանում ստանալ երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն: